տուածային գթութեամբն յարհիական աստիճան բարձրացաք, զպատշաճաւոր հոգ յանձին կալաք ըստ սրբազան ժողովոց վճռացն, առաջնորդական պաշտամանս մերում բաւական առնելով, զբարեկարգութենէ եկեղեցեացս մերոց բուռն արկանէաք. և քանզի եկեղեցին Աստուծոյ ոչինչ սրբագոյն և գերազանցագոյն ունի քան զսուրբ խորհուրդս, զորս Քրիստոս Տէրն մեր վասն փրկութեան ազգի մարդկանս սահմանեաց, զգիրքն հասարակաց Մաշտոց կոչեցեալ, յորում կարգն պաշտելոյ զսրբազան խորհուրդս և զայլ արարողութիւնս կատարելոյ պարունակի, տրամադրել յանձն առաք. զոր ձեռն աստուածաբանից մերոց, եւս առաւել պատուելի Տեառն Ստեփանոսի Ստեփանեան աստուածաբանութեան վարդապետին. զհին ձեռագիր Մաշտոցս ընդ միմեանս բաղդատելով, և իբր զանհուն սխալանս՝ որք ոչ միայն ընդդէմ իմացման աղօթիցն՝ այլ և ընդդէմ իսկ ուղղափառ հաւատոյս մերում սփռեալք էին՝ սրբագրել, և զսրբագրեալսն կարգաւ յօրինել, նա և զհարկաւոր խրատսն իւրաքանչիւր խորհրդոցն և արարողութեանցն յառաջ դնել, և որ ինչ պակասէր ի մեր Մաշտոցն՝ ի հռովմէականէն՝ հետեւելով շաւղաց նախորդաց մերոց՝ առեալն առադրել ջանացաք։ Արդ զի եկեղեցեաց մերոց հոգաբարձու բարոխքն (ժողովրդապետք) ի բաց թողեալք զայլ Մաշտոցս՝ այսու միայն, զոր մեք արհիական հեղինակութեամբ մերով առփորձեցաք և հաստատեցաք, այսուհետեւ վարեսցին. զխեղճ մտաց նոցին ծանրացուցանելով պարտաւորեմք։ Գրեցաւ յարհիական պատատն մեր ի Լէօբոլիս, յամի Տեառն 1728, յապրիլի ամսոյ ԺԵ։ -- [ի Հռովմ]։

1728·

Բարոյական Աստուածաբանութիւն Ստեփանոսի Ստեփանեան Ռոշքայ, սրբազանի աստուածաբանութեան վարդապետի Կամէնցացւոյ, ըստ գերիմաստ վարդապետացն հարազատ իմացուածոցն, հանդերձ դիպուածոցն մեկնութեամբ համառօտեալ ի Սդանիսլաւով. յամի Տեառն 1728, և Հայոց ՌՃՀԷ։ [ի Հռովմ]։

1730·

Ե՞ Տէր Սարգիս ի գավառէս Եկեղեաց յարեւելեան գուղն Տիրանաշէնու, որ եմ որդի Տէր Սահակի կրկ? ծառայ Տէր Ներսէս վարդապետի մեծին հար... Հայոց ՌՃՀԹ, գնեցի Ֆօշան պիտանի Կանոնաց գիրքս, որ է խրատ քրիստոնէից, և է անհաւատից. Տէր քաղցրացուցանէ սիրտ անդարցից և փորձ ի մեղաց. եկաւ քո ոտաց կոխ և անպիտան լոկ անուն կոչեցեալ Տէր Սարգիս, և է մեղօք շաղախեալ։ Տէր Ցիսուս բարձցէ սիրտ քարեղէն, տացէ սիրտ մարմնեղէն. որ երկիւղիմ այն օրէն՝ որ համար յուզէ յինէն. Տէր Ցիսուս, ամենայն հաւատացեալք դարձո ի մեղաց. և արա քոյին սուրբ երեսի տեսութեանն (արժանի). ամէն։ -- Թվին Հայոց ՌՁԸԻ.